ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏԵՂԵԿԱՆՔ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԲԱՆ

Հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) շարունակում է մամուլի հրապարակումների մշտադիտարկումն ու դրանց վերլուծության արդյունքների ամփոփումը: Նշենք, որ լրատվամիջոցների հրապարակումները կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման դեպքի առերևույթ խախտման հատկանիշներ, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ հայտարարագրերի վերլուծության համար:

2026 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել է 20 մեդիա հրապարակումների ուսումնասիրություն, որոնցից 2-ը վերաբերել են շահերի բախմանը, 3-ը՝ անհամատեղելիության պահանջներին, 3-ը՝ վարքագծի կանոններին, 12-ը՝ հայտարարագրերին:



Ստորև ներկայացվում է վերոնշյալ հրապարակումների հիման վրա իրականացված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը.

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

1. «Աշտարակի ավագանու անդամի ղեկավարած ընկերությունը 966 մլն դրամի պայմանագրեր է կնքել համայնքի հետ», https://hetq.am/hy/article/178972, «Hetq.am» լրատվական կայք, 12 հունվարի, 2026 թ.:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Աշտարակի համայնքապետարանը 2025 թվականին 45 մլն 756 հազար դրամի և 185 մլն 400 հազար դրամի գնման երկու պայմանագիր է կնքել «Ավանգարդ շին» և «Էկո սիթի գրուպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հետ: Ընկերությունների 40%-ը պատկանում է Աշտարակ համայնքի ավագանու անդամ Արա Բաղդասարյանի կնոջը՝ Մերի Խաչատրյանին, իսկ Արա Բաղդասարյանը «Ավանգարդ շին» ՍՊ ընկերության տնօրենն է: Մինչ 2025 թվականը «Ավանգարդ շին» և «Էկո սիթի գրուպ» ընկերությունների կոնսորցիումը Աշտարակի համայնքապետարանի հետ կնքել է մեկ պայմանագիր՝ 240 մլն դրամի, ևս երկու պայմանագիր՝ 495 մլն դրամի, համայնքապետարանի հետ կնքել է «Ավանգարդ շին» ՍՊ ընկերությունը:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է իրականացված գնումների ընթացակարգերի և համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում:

Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 18-ին իրականացրել էր ուսումնասիրություն մեկ այլ՝ «Infocom.am» լրատվական կայքի՝ «*Աշտարակ համայնքը վերջին 3 տարում շուրջ 735 մլն դրամի գնում է կատարել ավագանու անդամի ընկերությունից*» վերտառությամբ հրապարակման հիման վրա, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել համայնքապետարանի և «Ավանգարդ շին» և «Էկո սիթի գրուպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի միջև 2022 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ **ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-22/4**, 2023 թվականի հունիսի 9-ին կնքված՝ **ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-23/4**, 2024 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված՝ **ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-24/5** ծածկագրերով պայմանագրերին: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 9-ին կայացրել է Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին ՎԻՎ/167/2025 որոշումը, իսկ 2025 թվականի հուլիսի 29-ին կայացրած՝ ՎԻՎ/167/2025 որոշմամբ Հանձնաժողովը

Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի նկատմամբ որոշել է կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով: Որոշման շրջանակներում արձանագրվել է, որ Թովմաս Շահվերդյանը, առանց Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու, որպես պատվիրատուի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում համայնքի կարիքների համար գնման պայմանագիր է կնքել «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի հետ գործնական հարաբերություններ ունեցող անձի՝ «Ավանգարդ Շին» ՍՊ ընկերության հետ, որի գործադիր մարմնի ղեկավարը հանդիսանում է նույն համայնքի ավագանու նույն կուսակցության անդամ Արա Բաղդասարյանը: Ընկերության հետ կնքված այլ պայմանագրերի առնչությամբ Հանձնաժողովը որոշել է վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ կետը՝ 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Քննարկված վարույթի հիմքում չի դրվել համայնքապետարանի և «Ավանգարդ շին» ՍՊ ընկերության միջև 2025 թվականի հունիսի 20-ին կնքված՝ **ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/3-2** ծածկագրով պայմանագիրը՝ հաշվի առնելով, որ ուսումնասիրության ժամանակահատվածում գնումների էլեկտրոնային համակարգում պայմանագիրը դեռևս հրապարակված չի եղել: Միաժամանակ, Հետք լրատվական կայքի սույն հրապարակման ուսումնասիրության շրջանակներում **ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/3-2** ծածկագրով գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ Հանձնաժողովի կողմից գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների առերևույթ խախտումներ չեն արձանագրվել: Ինչ վերաբերում է պայմանագրի կնքման համատեքստում շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չներկայացնելուն, Հանձնաժողովը որոշել է վարույթ չնախաձեռնել՝ նկատի ունենալով, որ սույն գնմանը հաջորդած՝ «Ավանգարդ Շին» ՍՊ և «ԷԿՈ ՍԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունների և Աշտարակի համայնքապետարանի միջև 2025 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ **ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-25/1** ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում Թ. Շահվերդյանը օրենքով սահմանված կարգով դիմել է Հանձնաժողով՝ շահերի բախման իրավիճակի լուծման վերաբերյալ առաջարկ ստանալու նպատակով, ինչի շրջանակներում Հանձնաժողովը, հիմք ընդունելով օրենքի համապատասխան կարգավորումները, համայնքի ղեկավարին առաջարկել է նախքան պայմանագրերի կնքումը հանդես գալ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարությամբ՝ հրապարակելով այն համայնքապետարանի կայքէջում: Համայնքի ղեկավարի կողմից նշված հայտարարությունը ներկայացվել է նաև Հանձնաժողով:

2. «53,4 միլիոն հարկային արտոնություն, 25 միլիոն դրամաշնորհ՝ նախարարի ամուսնուն», hraparak.am/am/post/a2757bffd4da26c7e481918301e38b05, «Hraparak.am» լրատվական կայք, մարտի 28, 2026 թ.:

Ըստ հրապարակման՝ *Առողջապահության նախարարությունում պետական պատվերների մեծամասնությունն իրականացվում է նախարար Անահիտ Ավանեսյանի մորը պատկանող «Արֆարմացիա» ՓԲ ընկերությունից: Վերջին մեկ տարվա ընթացքում սույն ընկերության հետ ավելի քան 83 միլիոն դրամի պայմանագիր է կնքվել: Բացի դրանից՝ նախարարն օգնում է իր ամուսնուն պատկանող ընկերություններին արտոնյալ դիրք ունենալ շուկայում, օրինակ՝ սարքավորումների մատակարարման շրջանակներում 53,4 միլիոն դրամի չափով հարկային արտոնությունների և պետության կողմից ավելի քան 25 միլիոն դրամ դրամաշնորհների ստացման հարցում:* Հանձնաժողովը 2021-2026 թվականներին լրատվամիջոցների հրապարակումների և դիմումների հիման վրա պարբերաբար իրականացրել է ուսումնասիրություններ՝ Անահիտ Ավանեսյանի շահերի բախման համատեքստում: Իրականացված ուսումնասիրությունները, ի թիվս այլնի, վերաբերել են Առողջապահության նախարարության կազմակերպած գնման գործընթացներին «Արֆարմացիա» ՓԲ ընկերության մասնակցության և դրանց արդյունքներով վերջինիս հետ գնման պայմանագրեր կնքելուն, ինչպես նաև Անահիտ Ավանեսյանի ամուսնու բաժնեմասնակցությամբ «Իբարի» ՍՊ ընկերությանը 2022 թվականին Կառավարության կողմից ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնություն տրամադրելուն: Անդրադառնալով իրականացված գնման գործընթացներին՝ Հանձնաժողովն **արձանագրել է, որ պետական կառավարման մարմնում, այդ թվում՝ Առողջապահության նախարարությունում,** նախարարը, ի պաշտոնե, չի հանդիսանում գնման գործընթացում ներգրավված անձ **կամ պայմանագրի կողմ**, ինչպես նաև չի ձևավորում գնահատող հանձնաժողով կամ այլ կերպ չի մասնակցում գնման գործընթացի կազմակերպմանը: Առողջապահության նախարարության անունից գնման պայմանագրերը կնքվել են գլխավոր քարտուղարի կողմից՝ գնումների ընթացակարգերի վերաբերյալ գործող իրավակարգավորումների պահպանմամբ: Հետևաբար, նախարարին փոխկապակցված ընկերության՝ Առողջապահության նախարարության կարիքների համար պատվիրվող գնման գործընթացներին մասնակցության առումով նախարարի կողմից շահերի առերևույթ դեպք (իրավիճակ) առկա չէ:

Հարկ է նշել, որ 2026 թվականի մայիսին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել է գնումների գործընթացում շահերի բախման իրավիճակների կառավարման և փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցության դեպքերը սահմանափակող՝ ««Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով, ի թիվս

այնի, նախատեսվել են սահմանափակումներ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց հետ փոխկապակցված կազմակերպությունների՝ գնման գործընթացների մասնակցության վերաբերյալ:

Միաժամանակ, հրապարակման երկրորդ դրվագի առնչությամբ արձանագրվել է, որ նախարարի ամուսնու բաժնեմասնակցությամբ «Իբարի» ՍՊ ընկերությանը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնություն տրամադրվել է Կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 362-Ա որոշմամբ: Արտոնություն տրամադրելու պայմանները և ընթացակարգը սահմանված են Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշմամբ, որն ունի համընդհանուր կիրառելիություն, անդրադառնում է անձանց (կազմակերպությունների) լայն շրջանակի վրա, չի կրում մասնավոր բնույթ, ինչը բացառում է մասնավոր շահի առկայությունը: Ընդ որում, հայտը ընդունում, դրա համապատասխանությունը որոշման պայմաններին ստուգում և համապատասխան որոշման նախագիծը պատրաստում ու Կառավարության հաստատմանն է ներկայացնում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Թեև Անահիտ Ավանեսյանը, որպես Կառավարության անդամ, մասնակցել է «Իբարի» ՍՊ ընկերությանը արտոնություն տրամադրելու մասին համապատասխան որոշման ընդունմանը, այնուամենայնիվ, այդ որոշմամբ հաստատվել է ընկերության հայտը: Արտոնության տրամադրման փաստացի հիմք է հանդիսացել Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշումը, որի շրջանակներում Կառավարության կողմից գերակա ճանաչված ոլորտներում գործունեության իրականացնող և որոշմամբ հաստատված կարգի պահանջներին բավարարող տարբեր ընկերություններ ստացել են արտոնություն: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կառավարության խնդրո առարկա նիստին նախարարի մասնակցությունը և քվեարկությունը, Հանձնաժողովի գնահատմամբ, չի հանգեցրել շահերի բախման առերևույթ իրավիճակի առաջացման:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մեդիա մոնիթորինգի շրջանակներում վեր են հանվել շահերի բախմանը վերաբերող ևս երկու հրապարակումներ՝ կատարված «Hetq.am» լրատվական կայքի կողմից՝ համապատասխանաբար՝ *«Անշարժ գույք զբոսայգու դիմաց. ՔՊ-ականների, Էդուարդ Բաբայանի և արտոնյալ գործարարի կապը» և «Առուշ Առուշանյանի ազգականը 312 մլն դրամի պայմանագիր է կնքել Գորիսի համայնքապետարանի հետ» վերտառություններով: Հրապարակումներում շրջանառվող տեղեկատվությունը վերաբերում է մի դեպքում Աբովյան համայնքում հողհատկացումների, նախագծման, շինարարության և շահագործման թույլտվությունների տրամադրման, մյուս դեպքում՝ Գորիս համայնքի կարիքների համար գնումների կազմակերպման գործընթացներին: Նշված հրապարակումները ներկայում գտնվում են ուսումնասիրության փուլում և առաջիկայում ենթակա են քննարկման Հանձնաժողովի կողմից:*

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. «Միլիոնավոր եկամուտներ՝ տարբեր կազմակերպություններից. ինչ է հայտարարագրել Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Լուսինե Քոչարյանը», https://armlur.am/1546522/, «Armlur.am», լրատվական կայք, մարտի 9, 2026 թ.:

Հրապարակումն անդրադարձել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրում առկա եկամուտներին և դրանց աղբյուրներին: Միաժամանակ, Հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների շրջանակներում ուսումնասիրել է Լուսինե Քոչարյանի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց՝ 2025 թվականի նոյեմբերի 13-ից հետո ստացված եկամուտները և ստացման հիմքերը: Ըստ այդմ՝ արձանագրվել է, որ պաշտոնը ստանձնելուց հետո Լուսինե Քոչարյանն ստացել է եկամուտ «ՕՖՆԱՐ» ՍՊ ընկերությունից՝ որպես ընկերության նախկին բաժնետեր: Ընկերությունում իր մասնակցությունը վերջինս դադարեցրել է 2025 թվականի հոկտեմբերի 16-ին, իսկ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում պաշտոնավարումը դադարել է 2025 թվականի սեպտեմբերի 17-ից: Ըստ այդմ՝ առևտրային կազմակերպությունում մասնակցությունը և դրա կառավարման մարմնում ներկայացվածությունը դադարեցվել է նախքան անձի կողմից հանրային պաշտոնի ստանձնումը:

Միաժամանակ, ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց՝ 2025 թվականի նոյեմբերի 13-ից հետո Լ. Քոչարյանը վարձատրություն է ստացել «ԷՐԵԲՈՒՆԻ» բժշկական ակադեմիա հիմնադրամից: 2026 թվականի հունվարի 1-ից հետո «ԷՐԵԲՈՒՆԻ» բժշկական ակադեմիա հիմնադրամից ստացված եկամուտներ առկա չեն եղել: «Հանրային ծառայության մասին» օրենքի համատեքստում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին հնարավորություն է տրվում պաշտոնում նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ապահովել անհամատեղելիության պահանջների կատարումը:

Միաժամանակ, Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև, որ նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց հետո Լ. Քոչարյանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում նախ աշխատել է որպես ասիստենտ, ապա՝ մինչև 2026 թվականի հունվարի 26-ը զբաղեցրել է մասնագետի պաշտոն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Լ. Քոչարյանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում զբաղեցրել է դասախոսի և քննական հանձնաժողովի անդամի պաշտոնները՝ կատարելով «Հանրային ծառայության մասին»

օրենքի իմաստով կրթական աշխատանք, ուստի Հանձնաժողովն արձանագրել է, որ Լ. Քոչարյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում առկա չէ:

2.«85 հազար դոլար կանխիկ, 12 անշարժ գույք, միլիոնավոր եկամուտներ. Լոռու փոխմարզպետի ունեցվածքը», https://armlur.am/1547267/, «Armlur.am» լրատվական կայք, մարտի 12, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Լոռու մարզպետի տեղակալ Արսեն Ղարիբյանը եկամուտ է ստացել ձեռնարկատիրական գործունեությունից՝ Ռուսաստանի Դաշնությունում գործունեություն իրականացնող «Ազիմուտ» առևտրային կազմակերպությունից:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Ա. Ղարիբյանի անհամատեղելիության պահանջների համատեքստում: Ա. Ղարիբյանի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ վերջինս ստացել է եկամուտ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված «Ազիմուտ» շինարարական կազմակերպությունից՝ որպես մասնաբաժին: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությամբ Ա. Ղարիբյանի ստացած եկամուտների կամ վերջինիս բաժնեմասնակցության վերաբերյալ տեղեկություն չի պարզվել: Միաժամանակ, նկատի ունենալով կազմակերպության՝ արտերկրում գրանցված լինելու հանգամանքը, Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրությամբ ձեռք չեն բերվել բավարար տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ: Ըստ այդմ՝ Հանձնաժողովը պարզաբանում է հայցել Ա. Ղարիբյանից՝ «Ազիմուտ» առևտրային կազմակերպությունում մասնակցության առկայության և պաշտոնը ստանձնելուց հետո վերջինիս կողմից ձեռնարկված քայլերի վերաբերյալ: Ի պատասխան Հանձնաժողովի հարցմանը՝ Ա. Ղարիբյանը հայտնել է, որ Լոռու մարզպետի տեղակալի պաշտոնի ստանձնման՝ 2025 թվականի սեպտեմբերի 12-ի դրությամբ, ինչպես նաև պաշտոնավարման ընթացքում չի ունեցել մասնակցություն «Ազիմուտ» առևտրային կազմակերպությունում, իսկ հայտարարագրում ներկայացվել են մինչև պաշտոնի ստանձնումը ստացված եկամուտները, ուստի Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում առկա չէ:

3. «155 հազար դոլար կանխիկ, 8 անշարժ գույք. ինչ ունի ՍԱՏՄ ղեկավարը. «Ժողովուրդ», https://armlur.am/1547491/, «Armlur.am» լրատվական կայք, մարտի 13, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանն ունի մասնակցություն մի շարք առևտրային կազմակերպություններում:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Տ. Պետրոսյանի անհամատեղելիության պահանջների համատեքստում: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Տիգրան Պետրոսյանը Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց՝ 2025 թվականի հունիսի 24-ից հետո չի ունեցել մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային որևէ կազմակերպությունում: Վերջինս մինչ պաշտոնը ստանձնելը՝ 2019 թվականի հուլիսի 9-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը ունեցել է 50 % մասնակցություն «Էյր լոգիստիկ կարգո» ՍՊ ընկերությունում, իսկ 2017 թվականի մայիսի 15-ից մինչև 2017 թվականի հոկտեմբերի 13-ը Տ. Պետրոսյանը հանդիսացել է «ԳԼՈԲԱԼ ԲՐԵԴ» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում առկա չէ՝ նկատի ունենալով ընկերություններում Տ. Պետրոսյանի մասնակցության և գործադիր մարմնում պաշտոնավարման ավարտի ժամկետները:

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. *«Շատ եք լռվում, ձեր լայնքը հեսա կնեղացնենք. լարված իրավիճակ՝ Երևանի ավագանու նիստում», https://oragir.news/hy/material/2025/12/23/180641, «oragir.news» լրատվական կայք, դեկտեմբերի 23, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը Երևան քաղաքի ավագանու նիստի ընթացքում վիճաբանություն է ունեցել ավագանու անդամների հետ:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) 36-րդ և 37-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն

ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ.Ավինյանն իր խոսքը կատարել է որպես նիստը վարող՝ արձագանքելով ու նկատողություն անելով նիստի բնականոն ընթացքն ընդհատած ավագանու անդամներին: Նշվածը հաշվի առնելով՝ Տ.Ավինյանի խոսքի և կատարած առանձին արտահայտությունների բովանդակության վերլուծությամբ Հանձնաժողովը գտել է, որ Տ.Ավինյանի խոսքը նպատակ է ունեցել քննադատելու նիստի բնականոն ընթացքն ընդհատած ավագանու անդամներին և գնահատական տալու նրանց վարքագծին, ինչպես նաև վերականգնելու նիստի բնականոն ընթացքը: Հանձնաժողովը կարևորել է, որ Տ.Ավինյանի հնչեցրած գնահատականները վերաբերել են ավագանու անդամների վարքագծին և ոչ թե անձին, և եզրակացրել է, որ դրանք առաջին հերթին կրել են նիստը վարողի իրավասություններն իրականացնելու և ավագանու անդամների վարքագիծը քննադատելու և ոչ թե նրանց վիրավորելու նպատակ: Հանձնաժողովը նաև հաշվի է առել այն հանգամանքը, որ Տ.Ավինյանի ամբողջ խոսքի ընթացքում ավագանու անդամները շարունակել են վիճել նրա հետ:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված հրապարակմամբ ներկայացված վարքագիծը չի անցել քաղաքական բանավեճի շրջանակներում թույլատրելի խոսքի սահմանները և, չնայած կիրառված որոշ արտահայտությունների հեգնական բովանդակությանն ու դրանց տոնայնությանը, չի պարունակել վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ, և որոշել է դրա առթիվ չհարուցել վարույթ:

2.«Սափեյանը խոչընդոտել է «Նռնօրհնեքի» կարգը. հոգևորականներն ու հավատացյալները դուրս են եկել եկեղեցուց», https://news.am/arm/news/923337.html, «News.am» լրատվական կայք, հունվարի 1, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը Թալինի Սուրբ Աստվածածին եկեղեցում խոչընդոտել է «Նռնօրհնեքի» կարգը, հայտնել, որ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնին նվիրված պատարագին իր անձը պետք է ներկայացվի՝ որպես Թալինի Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավոր և պնդել, որ պատարագի ժամանակ պետք է զեղչվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 45-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը, ի պաշտոնե հանդես գալիս, պարտավոր է զերծ մնալ այլ անձանց (այդ թվում՝ իր հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող) մտքի, կրոնի, խղճի ազատության իրավունքին ոտնձգող գործողություններ կատարելուց, այդ թվում՝ այս կամ այն կրոնի դավանանքի քարոզ իրականացնելուց, կամ իր համոզմունքներն այլ անձանց

պարտադրելուց, կամ այլ անձանց մտքի, կրոնի, խղճի վերաբերյալ իր համոզմունքները տարածելուց և ազդեցություն գործադրելուն ուղղված գործողություններ կատարելուց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ կրոնի ազատության իրավունքը չի ենթադրում անձի կողմից եկեղեցական արարողությունն ընդհատելու հնարավորությունը: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Վարքագծի կանոնագրքի 45-րդ կետով նախատեսված պարտականությունները կիրառելի են միայն պաշտոնատար անձի կողմից ի պաշտոնե հանդես գալու դեպքերի նկատմամբ: Հաշվի առնելով, որ Տ. Սափեյանը եկեղեցի այցելել է ոչ աշխատանքային օրվա ընթացքում և այդ այցը չի ունեցել հրապարակային (լուսաբանվող) կամ պաշտոնական բնույթ, ինչպես նաև նկատի ունենալով, որ վերոնշյալ մեդիա հրապարակմամբ չի ներկայացվել որևէ տվյալ առ այն, որ Տ.Սափեյանը որևէ կերպ վկայակոչել է իր զբաղեցրած պաշտոնը կամ պայմանավորել իր պահանջները զբաղեցրած պաշտոնով՝ Հանձնաժողովը գտել է, որ Տ.Սափեյանը մեդիա հրապարակմամբ նկարագրված միջադեպի շրջանակներում հանդես է եկել որպես մասնավոր անձ:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ.Սափեյանի վարքագիծը չի հանգեցրել Վարքագծի կանոնագրքի 45-րդ կետի առերևույթ խախտման և որոշել է դրա առթիվ չհարուցել վարույթ:

3.*«Փաշինյանը գոռաց, մատ թափ տվեց, ապա հերքեց ու ներողություն խնդրեց. արցախցի կինը չի ընդունի վարչապետի առաջարկը. ՏԵՍԱՆՅՈՒԹ», https://factor.am/998232.html, «Factor.am» լրատվական կայք, մարտի 23, 2026 թ.:*

Հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը մետրոյում վիճել է քաղաքացու հետ, գոռացել նրա վրա, անվանել «փախած»:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:

Քննարկելով ՀՀ վարչապետի խոսքի և գործածված առանձին արտահայտությունների բովանդակությունը, նրա խոսքի հնչեցման ձևը, այն է՝ բարձրատոն լինելը, այն հանգամանքը, որ խոսքը հնչեցվել է քաղաքացու երեխայի ներկայությամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության մի շարք որոշումներով արձանագրվել է, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը բռնի տեղահանվել է իր մշտական բնակության երկրից, իսկ բռնի տեղահանումն ինչպես Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության, այնպես էլ ՀՀ քրեական

օրենսգրքի համաձայն՝ համարվում է մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն՝ Հանձնաժողովը գտել է, որ ՀՀ վարչապետի խոսքերն առերևույթ վիրավորական և հանցագործության տուժողների փորձն արժեզրկող, ուստիև՝ նրանց արժանապատվությունը նվաստացնող բնույթ են ունեցել: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ հրապարակմամբ նկարագրված՝ Ն.Փաշինյանի վարքագիծը պարունակել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ:

Միաժամանակ, Հանձնաժողովը էական է համարել այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների խախտման համար նախատեսված չեն իրավական պատասխանատվության կառուցակարգեր, իսկ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնի խախտում արձանագրելու՝ օրենսդրությամբ նախատեսված հետևանքը պաշտոնատար անձի հրապարակային պարզաբանման ներկայացումն է, մինչդեռ, քննարկվող դեպքում ՀՀ վարչապետն արդեն իսկ տեղի ունեցած միջադեպից հետո հանդես է եկել հրապարակային պարզաբանմամբ՝ ներողություն խնդրելով քաղաքացուց:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտել է, որ տվյալ պարագայում սեփական նախաձեռնությամբ վարույթի հարուցումը նպատակահարմար չէ, քանի որ եթե անգամ վարույթի արդյունքում Հանձնաժողովն արձանագրի վարքագծի կանոնների խախտման առկայություն, դրա հնարավոր հետևանքը լինելու էր ՀՀ վարչապետի կողմից հրապարակային պարզաբանման ներկայացումը, որն արդեն իսկ ներկայացվել էր: Ուստի, Հանձնաժողովը գտել է, որ վարույթի հարուցումն առարկայազուրկ է՝ դրա հնարավոր հետևանքի վրա հասած լինելով պայմանավորված և որոշել է վերոնշյալ մեդիա հրապարակմամբ նկարագրված դեպքի առթիվ չհարուցել վարույթ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

2026 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ԶԼՄ հրապարակումներից 12-ով արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովն ավարտել է 16 պաշտոնատար անձի և ընտանիքի 4 անդամների հայտարարագրերի ստուգումը, իսկ 52-ով արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովն այժմ իրականացնում

է 86 պաշտոնատար անձի հայտարարագրերի ստուգում, որոնց արդյունքները կհրապարակվեն հաջորդիվ հաշվետվությամբ:

Հարկ է ընդգծել, որ Հանձնաժողովը որոշում է ավարտել հայտարարագրերի վերաբերյալ մամուլում արձանագրված անհամապատասխանությունների ստուգումը՝ առաջարկելով հայտարարագրերում կատարել ուղղում, երբ արձանագրվել են սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման այնպիսի դեպքեր, որոնք նախկինում Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների արդյունքում գնահատվել են որպես նվազ նշանակության խախտում (օրինակ՝ տվյալն այլ կերպ ներկայացված է եղել հայտարարագրում) և երբ փարատվել են գույքի, եկամուտների և կատարված ծախսերի օրինականության կամ արժանահավատության առնչությամբ Հանձնաժողովի կասկածները:

1. *«Անհամապատասխանություններ Երևանի ավագանու մի շարք անդամների հայտարարագրերում», Infocom.am, սեպտեմբերի 16, 2024 թ:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Երևանի ավագանու անդամ Գրիգոր Իսկանդարյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով 2023 և 2024 թվականների տարեկան հայտարարագրերում դրամական միջոցների, նվիրատվությունների, աշխատավարձի, ստացված փոխառության և վարկային պարտավորությունների վերաբերյալ հայտարարագրված տվյալների ամբողջականությունն ու ճշգրտությունը:

Իրականացված ուսումնասիրության և Գրիգոր Իսկանդարյանից ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում պարզվել է, որ 2023 թվականի տարեկան հայտարարագրում առերևույթ առկա են եղել սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, մասնավորապես՝ երեխայի ծննդի կապակցությամբ ստացված նվիրատվությունների վերաբերյալ տվյալները հայտարարագրված չեն եղել, սակայն տվյալ դրվագով վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետներն արդեն սպառված են եղել:

Միաժամանակ, 2024 թվականի տարեկան հայտարարագրի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ «ԳԻԿԱՆՏ» ՍՊ ընկերությունից ստացված աշխատավարձի, Կարեն Արմենի Առաքելյանից ստացված փոխառության, ինչպես նաև «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ-ում առկա վարկի ավելացված մասի վերաբերյալ տվյալները հայտարարագրի համապատասխան բաժիններում ամբողջությամբ չեն արտացոլվել: Հաշվի առնելով ներկայացված պարզաբանումները, անհամապատասխանությունների բնույթը, 1-ին դրվագով վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելու հանգամանքը, ինչպես նաև նմանատիպ դեպքերում Հանձնաժողովի իրավակիրառ

պրակտիկան՝ որոշվել է ավարտել ուսումնասիրությունը և Գրիգոր Իսկանդարյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում:

2. *«596 մլն դրամ նվիրատվություն՝ համայնքային պաշտոնյաներին», Infocom.am կայք, ապրիլի 11, 2025թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով 2022 և 2023 թվականներին ստացված նվիրատվությունների, դրանց ծագման աղբյուրների և ստացման եղանակի, ինչպես նաև հայտարարագրերում արտացոլված այլ գույքային և եկամտային տվյալների ամբողջականությունը:

Իրականացված ուսումնասիրության և Գոռ Սարիբեկյանից ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում հաշվի առնելով դրանց ազդեցությունն ընդհանուր գույքային դրության վրա՝ անհրաժեշտ տվյալների հայտարարագրված լինելու փաստը և նվիրատվությունների չափը, հիմք չեն տվել հետագա քայլեր նախաձեռնելու համար, և այդ մասով Հանձնաժողովի կասկածները համարվել են փարատված:

Միաժամանակ ուսումնասիրությամբ արձանագրվել են ոչ ամբողջական հայտարարագրված տվյալներ և այլ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ վարկերի մնացորդների, ստացված վարկերը որպես եկամուտ չհայտարարագրելու, դրամական միջոցների, առանձին եկամուտների չարտացոլման կամ ինքնաշխատ ներբեռնված տվյալների «մերժված» կարգավիճակով թողնելու, ինչպես նաև հայտարարագրման ենթակա արժեթղթերի վերաբերյալ տվյալների չհայտարարագրման մասով: Բացի այդ, ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Գոռ Սարիբեկյանի կողմից պաշտոնավարման ժամանակահատվածում թույլ են տրվել հանրային ծառայողի անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումներ, սակայն վերջինս 2024 թվականի հուլիսի 4-ից այլևս չի հանդիսանում պաշտոնատար անձ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգման արդյունքների ամփոփման ժամանակ հայտարարատուն այլևս չի զբաղեցրել հայտարարատու պաշտոն (այլ պաշտոն ևս), միաժամանակ լրացած են եղել վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները՝ որոշվել է ավարտել ուսումնասիրությունը և Գոռ Սարիբեկյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված

տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում՝ արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով:

3. *«Միքայել Սրբազանի գործով դատախազը մեկ տարում Կենտրոնում առանձնատան տեր է դարձել. ի՞նչով է հայտնի Արգամ Դալլաքյանը»,* *news.am, հունիս 30, 2025թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Արգամ Դալլաքյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն: Ուսումնասիրության առարկա է հանդիսացել մամուլի հրապարակմամբ հիշատակված՝ Toyota Camry մակնիշի տրանսպորտի միջոցի փաստացի օգտագործման հանգամանքը, ինչի շրջանակում պարզաբանումներ են հայցվել ինչպես պաշտոնատար անձից, այնպես էլ տեղեկատվության հարցում է ուղարկվել «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը: Միաժամանակ, ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովը դիմել է նաև լրատվական ընկերությանը՝ խնդրելով առանց տեղեկատվության աղբյուրը բացահայտելու տրամադրել տրանսպորտի միջոցը նույնականացնող որևէ տվյալ, քանի որ Հանձնաժողովի ձեռք բերած տեղեկություններով չի հաստատվել հայտարարատուի կողմից չհայտարարագրված փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցի առկայության փաստը:

Մինչդեռ լրատվական ընկերությունից ստացվել է պատասխան առ այն, որ *«Զանգվածային լրատվության մասին» օրենքի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, իսկ հայցվող տեղեկատվությունն ինքնին ենթադրում է աղբյուրի բացահայտում:*

Հարկ է ընդգծել, որ Հանձնաժողովի հարցմամբ չի պահանջվել բացահայտել տեղեկատվության աղբյուրը. հայցվել են միայն հրապարակման մեջ հիշատակված տրանսպորտի միջոցը նույնականացնելու համար անհրաժեշտ տվյալներ (օրինակ՝ դրա հաշվառման համարանիշը), որի տրամադրումը չէր կարող դիտարկվել որպես տեղեկատվության աղբյուրի բացահայտում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովին հասանելի տեղեկատվությամբ չեն հաստատվել մամուլում արձանագրված հանգամանքները,

իսկ լրատվական ընկերությունը չի տրամադրել պահանջվող տեղեկությունները՝ Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը։

4. *«53 մլն կանխիկ դրամական միջոց անհայտ աղբյուրից. կնոջ թերի հայտարարագիրը. ինչպիսի՞ հայտարարագիր է ներկայացրել ՔՊ-ական Դավիթ Դանիելյանը», Armlur.am, հուլիսի 4, 2025 թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Դանիելյանի և նրա կնոջ՝ Անի Անտոնյանի 2024 թվականի տարեկան հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով կանխիկ դրամական միջոցների ծագման աղբյուրի, եկամուտների, ինչպես նաև անշարժ գույքի վերաբերյալ հայտարարագրված տվյալների ամբողջականությունն ու պատշաճ արտացոլումը։

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Դավիթ Դանիելյանի հայտարարագրում 53,000,000 ՀՀ դրամ կանխիկ դրամական միջոցների ծագման աղբյուրը հայտարարագրվել է որպես նախկինում օտարված անշարժ գույքերի վաճառքից գոյացած մնացորդ, իսկ 2,489,000 ՀՀ դրամ եկամուտը հայտարարագրվել է որպես իր կողմից նկարված նկարների վաճառքից ստացված գումար։ Միաժամանակ, Դավիթ Դանիելյանի կողմից ներկայացված պարզաբանման գնահատմամբ արձանագրվել է, որ նրա տարբեր տարիների հայտարարագրերում անշարժ գույքի վերաբերյալ առկա են սխալ կամ ոչ ամբողջական ներկայացված տվյալներ, մասնավորապես՝ որոշ գույքեր համապատասխան հայտարարագրերում կամ դրանց անհրաժեշտ բաժիններում չեն արտացոլվել, ինչպես նաև առկա են անշարժ գույքերի վերաբերյալ ոչ ճշգրիտ հաշվառման համարներ և կրկնվող կամ ոչ ամբողջական մուտքեր։

Ինչ վերաբերում է Անի Անտոնյանի հայտարարագրում արձանագրված անշարժ գույքի վերաբերյալ հրապարակման մեջ նշված հանգամանքին, ապա ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ գույքը չի հանդիսացել համատեղ սեփականություն, այլ եղել է Դավիթ Դանիելյանի միանձնյա սեփականությունը, և վերջինս դրա օտարման վերաբերյալ տվյալները հայտարարագրել է իր 2023 թվականի տարեկան հայտարարագրում։ Միաժամանակ, Անի Անտոնյանի 2024 թվականի տարեկան հայտարարագրում առկա տվյալների ճշգրտման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկվել է նրան ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված՝ վարչական տույժ

նշանակելու վաղեմության ժամկետները սպառված են, ինչպես նաև այն, որ ստուգման արդյունքում չեն հայտնաբերվել այնպիսի փաստեր, որոնք կվկայեին, որ հայտարարատուների գույք(եր)ի փոփոխությունը չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ որոշվել է ավարտել ստուգումը և Դավիթ Դանիելյանին ու Անի Անտոնյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում՝ համապատասխան շտկումներ կատարելու նպատակով։

5. *«ՔՊ վարչության անդամի համար պայքարող Քրիստինե Վարդանյանը հողամասի առուվաճառքով է զբաղվել»*, *Armlur.am, սեպտեմբերի 9, 2025 թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Քրիստինե Վարդանյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքում գտնվող հողամասի ձեռքբերման և օտարման, ինչպես նաև Վայք համայնքում հողամասի ձեռքբերման վերաբերյալ հայտարարագրված տվյալները։

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Վաղարշապատ համայնքում գտնվող հողամասի առուվաճառքի վերաբերյալ մամուլում հրապարակված տվյալները չեն համապատասխանում հայտարարագրման էլեկտրոնային համակարգում և Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալներին, քանի որ նշված հողամասը ձեռք է բերվել համատեղ սեփականության իրավունքով, և Քրիստինե Վարդանյանի կողմից վճարված ու հետագայում հայտարարագրված գումարները համապատասխանում են իր բաժնեմասին վերաբերող տվյալներին։ Միաժամանակ, Վայք համայնքում գտնվող հողամասի ձեռքբերման վերաբերյալ ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ այն ձեռք է բերվել աճուրդային կարգով, իսկ դրա մեկնարկային գինը էականորեն չի տարբերվել նույն բնակավայրում օտարման ենթակա համանման հողամասերի գներից։ Հետևաբար, հրապարակմամբ մատնանշված հանգամանքները չեն հաստատվել, և անհամապատասխանություններ չեն արձանագրվել։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշվել է ավարտել ուսումնասիրությունը՝ Հանձնաժողովի կասկածները փարատված համարելով։

6. *«Կոտայքի մարզպետի կինը՝ վարչապետի աշխատակազմում. ինչ ունեցվածք ունեն ամուսինները», Armlur.am, սեպտեմբերի 15, 2025 թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով անշարժ գույքի ձեռքբերման և օտարման, տրանսպորտային միջոցի, դրամական միջոցների, եկամուտների, ինչպես նաև ընտանիքի անդամի զբաղվածության վերաբերյալ արձանագրված տվյալները:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հրապարակմամբ արձանագրված հանգամանքների մի մասով առկա են հայտարարագրված տվյալների և Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանի տվյալների միջև անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ Ահարոն Սահակյանի հայտարարագրերում անշարժ գույքի ձեռքբերման տարվա, սեփականության իրավունքի տեսակի, ինչպես նաև առանձին գույքերի օտարման վերաբերյալ տվյալները ոչ ամբողջական կամ ոչ պատշաճ են արտացոլվել: Միաժամանակ, մամուլի հրապարակման այն պնդումը, թե անշարժ գույքերի ձեռքբերման եղանակները հայտարարագրերում նշված չեն եղել, չի համապատասխանում փաստական տվյալներին, քանի որ դրանք առկա են եղել համապատասխան հայտարարագրերում:

Ինչ վերաբերում է 2024 թվականի տրանսպորտի միջոցի, դրամական միջոցների, եկամուտների և ընտանիքի ընդհանուր գույքային դրության վերաբերյալ հրապարակմամբ բարձրացված հարցադրումներին, ապա ուսումնասիրությամբ այդ մասով հետագա գործընթացներ նախաձեռնելու անհրաժեշտություն չի արձանագրվել, քանի որ ինչպես հրապարակմամբ, այնպես էլ Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում պարզաբանման ենթակա հարց կամ անհամապատասխանություն չի արձանագրվել:

Ռոզա Ասատրյանի միաժամանակ մի քանի վայրում աշխատանքային գործունեություն իրականացնելու վերաբերյալ հարցի առնչությամբ Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն դեռևս 2024 թվականին՝ հիմք ընդունելով մեկ այլ, այն է՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի՝ «Ինչպես է Կոտայքի մարզպետի կինը աշխատում մեկ պետական, երկու համայնքային պաշտոններում և ՓԲԸ-ում, հայտարարագրերի հետքերով. Ժողովուրդ» վերտառությամբ հրապարակումը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել էր, որ վերջինս Վարչապետի աշխատակազմում կատարել էր քաղաքացիական աշխատանք և չէր հանդիսացել

հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձ, հետևաբար՝ Ռ.Ասատրյանի նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները կիրառելի չեն եղել:Հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ լրացել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված՝ վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները՝ որոշվել է ավարտել ստուգումը և Ահարոն Սահակյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել բոլոր տարիների հայտարարագրերում հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում:

7. *«358 մլն դրամի ասֆալտապատման պայմանագրեր՝ Արթիկ համայնքի ավագանու անդամին փոխկապակցված ընկերության հետ» «Infocom.am, մայիսի 14, 2025 թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Արթիկ համայնքի ավագանու անդամ Տիգրան Բաղդասարյանի և նրա հոր՝ Վահագն Բաղդասարյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով «Ճանշին» ՓԲԸ-ում մասնակցության, ինչպես նաև ՀՀ և համայնքների հետ կնքված՝ հայտարարագրման ենթակա պայմանագրերի վերաբերյալ տվյալների ամբողջականությունն ու ճշգրտությունը:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Տիգրան Բաղդասարյանի՝ 2022 և 2023 թվականների տարեկան հայտարարագրերում չի հայտարարագրել իր հոր՝ Վահագն Բաղդասարյանի՝ «Ճանշին» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնեմասի պատկանելիության վերաբերյալ տվյալները, իսկ 2024 թվականի տարեկան հայտարարագրում նշվել է միայն վերջինիս՝ ընկերության գործադիր տնօրեն լինելու հանգամանքը: Միաժամանակ, Վահագն Բաղդասարյանի՝ 2022, 2023 և 2024 թվականների տարեկան հայտարարագրերում «Ճանշին» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնեմասի վերաբերյալ տվյալները չեն հայտարարագրվել «Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում: Բացի այդ, Տիգրան Բաղդասարյանի՝ 2022 և 2023 թվականների տարեկան հայտարարագրերում չեն հայտարարագրվել Հայաստանի Հանրապետության և համայնքների հետ «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից կնքված՝ հայտարարագրման ենթակա մի շարք պայմանագրեր, մինչդեռ 2024 թվականի տարեկան հայտարարագրում պայմանագրերի վերաբերյալ պահանջվող տվյալները լրացված են:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2024 թվականի տարեկան հայտարարագրում քննարկվող տվյալները հայտարարագրված են, իսկ նախորդ տարիների հայտարարագրեի մասով լրացել են վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները՝ որոշվել է ավարտել ստուգումը և Տիգրան Բաղդասարյանին ու Վահագն Բաղդասարյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել համապատասխան տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում։

8. *«Մարզպետ Սարգսյանի «բերած» «խոպանչի» խորհրդականը չորսից-վե՞ց անշարժ գույք ունի»*, *Armlur.am, դեկտեմբերի 11, 2025թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով անշարժ գույքի ձեռքբերման, օտարման և նվիրատվությամբ ստացման վերաբերյալ հայտարարագրված տվյալների ամբողջականությունն ու ճշգրտությունը։

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մամուլի հրապարակմամբ արձանագրված հանգամանքները հիմնականում պայմանավորված են եղել հայտարարագրերում առանձին անշարժ գույքերի ձեռքբերման և օտարման տվյալների ոչ ամբողջական կամ ոչ պատշաճ արտացոլմամբ։ Մասնավորապես՝ 2022 թվականի տարեկան հայտարարագրում տարեվերջին «առկա չէ» նշումով արտացոլված հողամասի օտարման վերաբերյալ տվյալներ չեն հայտարարագրվել, թեև Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանում նույնպես օտարման տվյալներ առկա չեն եղել։ Միաժամանակ, Կադաստրի կոմիտեի տվյալների համաձայն՝ 2022 թվականին Ջանիկ Բազեյանը ձեռք է բերել չորս գույք՝ հայտարարագրված երեքի փոխարեն, որոնցից մեկը նույն տարում օտարվել է։ Արձանագրվել է նաև, որ 2023 թվականի տարեկան հայտարարագրում չեն արտացոլվել 2022 թվականին նվիրատվությամբ ստացված և 2023 թվականին օտարված հողամասի, ինչպես նաև ևս մեկ հողամասի ձեռքբերման և օտարման վերաբերյալ տվյալները, իսկ 2024 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրված գույքերից մեկի սեփականության իրավունքը դադարել է դեռևս 2023 թվականին։ Միաժամանակ, նվիրատու անձանց վերաբերյալ հրապարակմամբ բարձրացված հարցադրումների մասով պարզվել է, որ դրանք հայտարարագրված են որպես մերձավոր ազգականներ՝ մայր, եղբայր և քույր։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշվել է Հանձնաժողովի կասկածները համարել փարատված, ավարտել ստուգումը և Ջանիկ Բազեյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում։

9. *«Ինչու են պատգամավորներն ու ԱԺ աշխատակազմն իրենց զումարները կանխիկ պահում»*, *Hetq.am, դեկտեմբերի 1, 2025 թ.:*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Ազգային ժողովի պատգամավորներ Մարտուն Գրիգորյանի, Դավիթ Դանիելյանի, Իշխան Սաղաթելյանի, Խաչատուր Սուքիասյանի, Միքայել Թումասյանի, ինչպես նաև Ազգային ժողովի պատգամավորի օգնական Լևոն Մնացականյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով կանխիկ դրամական միջոցների չափի, դրանց ծագման աղբյուրների, ինչպես նաև հայտարարագրված գույքային և եկամտային տվյալների հիմնավորվածությունը։

Իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ առանձին հայտարարատուների մասով հրապարակմամբ արձանագրված հանգամանքները կասկած չեն հարուցել, քանի որ հիմնավորվել են հայտարարատուների և նրանց ընտանիքի անդամների ընդհանուր գույքային դրության, այդ թվում՝ դրան նախորդած ժամանակահատվածում ստացված եկամուտներով, մինչդեռ որոշ դեպքերում արձանագրվել է կանխիկ դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր հայցելու անհրաժեշտություն։ Մասնավորապես՝ Դավիթ Դանիելյանի, Խաչատուր Սուքիասյանի և Լևոն Մնացականյանի մասով կասկածները համարվել են փարատված, քանի որ կանխիկ դրամական միջոցների ծագման աղբյուրները հիմնավորվել են հայտարարագրված տվյալներով և Հանձնաժողովին հասանելի՝ տեղեկատվական շտեմարանների (ՊԵԿ, Կադաստրի կոմիտե) հետ համադրությամբ, ուստի այդ մասով Հանձնաժողով որոշել է կասկածները համարել փարատված և հետագա քայլեր չձեռնարկել, իսկ Միքայել Թումասյանից, Մարտուն Գրիգորյանից և Իշխան Սաղաթելյանից հայցել համապատասխան պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր՝ ստուգման ընթացքում արձանագրված պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ։

10. «ԱԺ նախագահի օգնականը հայտարարագիրը սխալ է լրացրել. 1 տունը վաճառել մի քանի անգամ. «Ժողովուրդ»», Armlur.am, նոյեմբերի 4, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Ազգային ժողովի նախագահի օգնական Կարլեն Գրեյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով անշարժ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների, այդ թվում՝ հիպոթեքային վարկի միջոցով ձեռք բերված գույքի, Գյումրի քաղաքում ձեռք բերված բնակարանի արժեքի, ինչպես նաև հայտարարագրման ենթակա գույքերի օտարման և դրանցից ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները:

Իրականացված ուսումնասիրության, ինչպես նաև Կարլեն Գրեյանից ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում պարզվել է, որ հրապարակմամբ արձանագրված հանգամանքների մի մասով կասկածները փարատվել են, մի մասով արձանագրվել են հայտարարագրման ենթակա տվյալների ոչ ամբողջական կամ ոչ պատշաճ արտացոլման հետ կապված անհամապատասխանություններ, իսկ առանձին դրվագներով խնդիրներ չեն արձանագրվել:

Մասնավորապես, 2021 թվականի տարեկան հայտարարագրում Երևան քաղաքում ձեռք բերված բնակարանի գործարքը կատարվել է հիպոթեքային վարկի միջոցով, որը որպես եկամուտ չի հայտարարագրվել, սակայն տվյալ դրվագով վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները սպառված լինելու հիմքով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ չի նախաձեռնվել:

Գյումրի քաղաքում 2022 թվականին ձեռք բերված բնակարանի արժեքի վերաբերյալ, ինչպես նաև Սարո Տեփանյանի հետ կատարված անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առնչությամբ ներկայացված պարզաբանումներն ու կից նյութերը գնահատվել են բավարար, և այդ մասով Հանձնաժողովի կասկածները համարվել են փարատված:

Միաժամանակ, ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2020-2024 թվականներին օտարված մի շարք անշարժ գույքերի և դրանցից ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները չեն արտացոլվել հայտարարագրերում: Ինչ վերաբերում է հրապարակմամբ հիշատակված տրանսպորտային միջոցներին, եկամուտներին, դրամական միջոցներին և այլ տվյալներին, ապա ուսումնասիրությամբ այդ մասով խնդիրներ չեն արձանագրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշվել է ավարտել ստուգումը և Կարլեն Գրեյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել ուղղման դիմում՝ արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով:

11. «Արուսիկ Ջուլհակյանը թաքցնում է փաստերը, իսկ ընկերուհին՝ ԿԿՀ նախագահը, չի նկատում. «Ժողովուրդ»», Armlur.am, հունվարի 24, 2026թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է ԱԺ պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Ավետ Պողոսյանի հայտարարագրերում հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Արուսյակ Ջուլհակյանի մասով հրապարակմամբ արձանագրված հանգամանքները չեն հաստատվել, քանի որ Հանձնաժողովին հասանելի ՔԿԱԳ տվյալների շտեմարանում վերջինիս ամուսնության պետական գրանցման վերաբերյալ տվյալներ առկա չեն, իսկ ներկայացված հրապարակային պարզաբանման համաձայն՝ 2024 թվականի ընթացքում համատեղ բնակության՝ հայտարարագրման համար անհրաժեշտ հիմքերը բացակայել են: Հետևաբար նշված տվյալը հայտարարագրման ենթակա չի հանդիսացել:

Միաժամանակ, Ավետ Պողոսյանի մասով արձանագրվել է, որ վերջինիս հայտարարագրերում առկա են անչափահաս զավակի վերաբերյալ տվյալները, մինչդեռ չափահաս զավակի վերաբերյալ տվյալներ հայտարարագրված չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշվել է Արուսյակ Ջուլհակյանի վերաբերյալ ուսումնասիրությունն ավարտել՝ տվյալը հայտարարագրման ենթակա չլինելու պատճառաբանությամբ, իսկ Ավետ Պողոսյանի մասով ևս՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ըստ ներկայացված պարզաբանման՝ չափահաս զավակը համատեղ չի բնակվում պաշտոնատար անձի հետ, ինչը հաշվի առնելով վերջինիս առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում՝ որպես պաշտոնատար անձի հետ համատեղ չբնակվող մերձավոր ազգականի տվյալները լրացնելու նպատակով:

12. «32,6 մլն տարեկան եկամուտ. ինչ ունեցվածք ունի Արմավիրի ՔՊ-ական համայնքապետը», Armlur.am, հունվարի 26, 2026թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Արմավիր համայնքի ղեկավար և ավագանու անդամ Վարշամ Սարգսյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն՝ մասնավորապես ստուգելով հիպոտեկային վարկի միջոցով գույքի ձեռքբերման և դրա հետ փոխկապակցված՝ կառուցապատողին հանձնված փոխառության, ինչպես նաև տրանսպորտի միջոցի օտարման գործարքների վերաբերյալ հայտարարագրված տվյալները:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հրապարակմամբ արձանագրված հանգամանքների մի մասը չի հաստատվել, իսկ մի

մասն առնչվել է հայտարարագրման ենթակա տվյալների ոչ ամբողջական կամ ոչ պատշաճ արտացոլմանը: Մասնավորապես՝ 18,345,000 ՀՀ դրամ գումարը հանդիսացել է հիփոթեքային վարկ, իսկ 6,500,000 ՀՀ դրամ եկամտի մասով հայտարարատուն նշել է, որ այն ստացվել է մեքենայի վաճառքից, ընդ որում՝ համապատասխան տվյալները արտացոլված են նաև տվյալ տարվա ընթացքում օտարված տրանսպորտային միջոցի վերաբերյալ բաժնում: Միաժամանակ արձանագրվել է, որ հիպոտեկային վարկի վերաբերյալ տեղեկությունները պատշաճ կերպով չեն արտացոլվել հայտարարագրի համապատասխան բաժիններում, ինչի կապակցությամբ հայտարարատուն ներկայացրել է ուղղման դիմում:

Հաշվի առնելով, որ նման դեպքերը Հանձնաժողովը դիտում է նվազ նշանակության, միաժամանակ հայտարարատուն Հանձնաժողով է ներկայացնել ուղղման դիմում՝ որոշվել է ավարտել ստուգումը և Վարշամ Սարգսյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել լրամշակված ուղղման դիմում՝ հայտարարագրված տվյալներում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ: